



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2020 թվականի թիվ 8-Ա
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 05-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԵԹԵՐԱԺԱՄԻ ՄԵԿ ԲՈՊԵԻ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշում է*.

1. Սահմանել 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչության ժամանակահատվածում վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը հանրային ռադիոյի համար 1200 (հազար երկու հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), հանրային հեռուստատեսության համար 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

14 փետրվարի 2020թ.
ք. Երևան